ՋԱՎԱԽՔՈՒՄ ՕԾՎԵՑ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ

«Ով որ գիտե, թե ինչ է բարին, և
չի անում, նրա համար այդ մեղք է»:
(ՀԱԿՈԲՈՍ Դ 17)

2001 թ. հոկտեմբերի 28-ին Սամցխե-Ջավախքի փարածաշրջանի Արագվա գյուղում, ի հիշատակ վաղամեռիկ Հայաստան Ցայլախանյանի, օծվեց Սրբոց Կուսանաց եկեղեցին: Օծման հանդիսավոր արարողությունը կատարվեց ձեռամբ վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպս. Մերայդարյանի: Ներկաների թվում էին Սամցխե-Ջավախքի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբդ. Սալբիյանը, Ախալքալաք քաղաքի Սուրբ Խաչ եկեղեցու հոգևոր հովիվ, Արժանապատիվ Տ. Սամվել քհն. Թորոսյանը, հոգևորականներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, մեծաթիվ հրավիրյալներ փարածաշրջանից, ինչպես նաև Հայաստան աշխարհից:

ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ՕԾՈՒՄ

Երիտասարդ աղջնակի անսպասելի մահվանից ճիշտ մեկ տարի անց Արագվա գյուղի և փարածաշրջանի քրիստոնյա հայորդիների առջև իր դռները հյուրընկալորեն բացեց գյուղին կից, զառիթափ բարձունքին դեպի երկինք վեր խոյացող Սրբոց Կուսանաց նորակառույց եկեղեցին:

Ժամը 13.00-ին սկսվեց եկեղեցու լվացման կարգը՝ համաձայն նախնյաց սրբազան արարողակարգի: Ըստ այդմ լվացվեց ողջ աղոթատունը նախ սովորական ջրով, ապա՝ գինիով:

Հավարտ լվացման կարգի կատարվեց օծման հանդիսավոր արարողությունը: Հավուր պատշաճի զգեստավորված հոգևորականաց դասը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպս. Մերայդարյանի գլխավորությամբ, թափոր կազմած և «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը: Հենց մուտքի մոտ, դրսի կողմից, համաձայն «Մաշտոց» ծիսարանի, ընթերցվեցին սուրբգրային հատվածներ և համապատասխան սաղմոսներ:

Ապա նույն կերպ մտնելով տաճար, դարձյալ սուրբգրային ընթերցումներով, սաղմոսասացությամբ և շարականների երգեցողությամբ, ձեռամբ Գևորգ Սրբազանի, կատարվեց աղոթատան օծումը: Սրբալույս Մյուռոնով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու չորս անկյունները, սյուները, հյուսիսային, հարավային և կենտրո-

նական դռները, Մեղանը, խորանները, իսկ վերջում՝ եկեղեցում գործածվելիք կահ-կարասին:

«Սրբոց Կուսանաց» եկեղեցու օծումը, որին ներկա էին մեծաթիվ ուխտավորներ, ավարտվեց ժամը 14.00-ին:

ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օծման հանդիսավոր արարողությունից անմիջապես հետո եկեղեցու զանգի երկնագնա ղողանջները սրբագործված տաճար էին հրավիրում հայ հավատավորին՝ հոգու բերկրանքը, որպես մշտանորոգ աղոթք, առ Բարձրյալն առաքելու, Ամենակարող Տիրոջ խաղաղարար ու կենսատու լույսով վերարթնության անմեկնելի խորհուրդն ապրելու: Նորաօծ եկեղեցում մատուցվեց անդրանիկ Սուրբ և անմահ Պատարագը: Օրվա պատարագիչն էր ուխտավորաբար Արագվա ժամանած Շիրակի թեմի Ս. Յոթվերք Մայր եկեղեցու ծիսակատար, Արժանապատիվ Տ. Խոսրով քհն. Ստեփանյանը:

Հընթացս մատուցվող Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, հավուր պատշաճի քարոզ խոսեց Սրբազան Հայրը՝ ներկաներին մեկնելով օրվա խորհուրդը, եկեղեցու կառուցման առիթը, ապա նաև քրիստոնեական հավատի խորախորհուրդ նշանակությունը յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում: Իր խոսքի վերջում Սրբազան Հայրը աղոթք առաքեց առ Կենսապարգև Տերը՝ Հայաստան-դստրիկի հիշատակի պայծառության և հոգու խաղաղության համար:

Ս. Պատարագից հետո տրվեց նաև սիրո ճաշ:

Հիրավի, ճշմարիտ հավատավորի, առավել ևս հինավուրց Ջավախք աշխարհում բնակվողի համար անչափ կարևոր է, աղոթելու հետ մեկտեղ, նաև իր աղոթատունն ունենալը, որ է այս պարագային Սրբոց Կուսանաց նորակառույց ու նորաօծ եկեղեցին: Նաև հարկ է չմոռանալ, որ մեր հինավուրց ժողովուրդը, իր աղոթքներով ու աղոթատներով, եղել է և լինելու է բոլոր ժամանակներում, իսկ քրիստոնեական մեր հավատը, իբրև Թաբոր լեռ, ուղեկցելու է մեզ դեպի հավիտենություն:

ՍԱՆԱՍԱՐ ԴՊԻՐ ՂՈՒԼԻԿՅԱՆ